ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ՝ ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՐՅՈՒՐ ՏՈԿՈՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ (ՆՇԱՆԱԿՄԱՆ) ՄՐՑՈՒՅԹԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմը հայտարարում է մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայության առողջապահական **«Էջմիածնի բժշկական կենտրոն»** փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար:

Ընկերության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

1. բարձրագույն բժշկական կրթություն կամ առողջապահության կառավարում և կազմակերպում մասնագիտական կրթություն, հանրային ծառայության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ առողջապահական բնագավառի առնվազն չորս տարվա աշխատանքային ստաժ:
2. Մրցույթը կանցկացվի **2025 թվականի ապրիլի 28-ին ժ. 11^{00} -ին:**
3. Մրցույթին մասնակցելու համար դիմումատուները Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ են ներկայացնում՝

1) դիմում, որում նշվում է հավակնորդի անունը, ազգանունը և հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում հայրանվան առկայության դեպքում), բնակության վայրը, հեռախոսահամարը, ֆաքսի համարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն (դրանց առկայության դեպքում).

2) մեկ լուսանկար՝ 3 x 4 չափի.

3) աշխատանքային ստաժը հավաստող փաստաթուղթ.

4) ինքնակենսագրություն.

5) անձը հաստատող փաստաթղթի պատճեն.

6) բարձրագույն կրթության դիպլոմի (արական սեռի հավակնորդի դեպքում՝ նաև պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելու հանգամանքը հավաստող կամ այլընտրանքային ծառայություն անցած լինելու կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելու կամ տարկետման մեջ գտնվելու փաստը հավաստող փաստաթղթի) պատճեն.

7) տեղեկանք՝ դատվածության, դատվածությունը հանված կամ մարված լինելու վերաբերյալ.

8) տեղեկանք՝ սնանկության կամ դրա բացակայության վերաբերյալ.

9) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 98-Ն որոշմամբ սահմանված հիվանդությունների բացակայության վերաբերյալ.

10) հավակնորդի ցանկությամբ՝ հրատարակված գիտական հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դրանց առկայության դեպքում.

11) բնութագիր՝ վերջին աշխատավայրից (ըստ դիմումատուի ցանկության).

12) Ընկերության զարգացման և բարեփոխման հայեցակարգը (ներկայացվում է մրցույթի անցկացման օրվանից առնվազն երեք օր առաջ, ինչի վերաբերյալ կազմվում է հանձնման-ընդունման ակտ), որը ներառում է Ընկերության զարգացման և բարեփոխման, ինչպես նաև Ընկերության մասնագիտական, ֆինանսատնտեսական և կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշները, Ընկերության կառուցվածքի և գործունեության բարեփոխմանն ուղղված առաջարկությունները:

4. Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է առձեռն կամ առցանց՝ բացառությամբ Ընկերության զարգացման և բարեփոխման հայեցակարգի, որը ներկայացվում է առձեռն:

5. Առձեռն փաստաթղթերը ընդունվում են ամեն օր, բացի ոչ աշխատանքային օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2025 թվականի մարտի 25-ը:

Մրցույթը կկայանա Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի վարչական շենքում (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք, Աբովյան 71): Մրցույթին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկությունների, ինչպես նաև հարցաշարին ծանոթանալու համար կարող են դիմել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմ (գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզ, Արմավիր քաղաք, Աբովյան 71, *Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժին, 0237 21629, էլեկտրոնային հասցե՝ armavir.andznakazmi.karavarum@gmail.com* կամ *armavir.kadrer@mta.gov.am):*